ՄԵՐ ՅԱՏՈՒԿ ԹՂԹԱԿԻՑ ԱՐԹՈՒՐ ՏԷՐԵԱՆԸ ՀԱՂՈՐԴՈՒՄ Է ՄՈՍԿՈՒԱՅԻՑ

ԻՆՉ Է ՍՊԱՍՈՒՄ ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻՆ

Սեպտեմբերի 5ին Մոսկուայում Գրողների կենտրոնական տանը տեղի ունեցաւ Ռուսաստանի մտաւորականութեան «Ղարաբաղ» կոմիտէի (ՌՄՂԿ) հերթական նիստը:

Գրող հրապարակախօս Անդրեյ Նույկինը իր բացման խօսքում նշեց, որ նիստին մասնակցում են Շահումեանի շրջանի վերջին իրադարձութիւնների ականատեսներ:

Շահումեանի շրջանից Սեպտեմբերի 4ին Մոսկուա վերադարձած Կ. Ալեքսեյեւսկին ներկայացրեց իր տպաւորութիւնները: Նա ասաց, որ ընդհարումներում Խորհրդային բանակի առանձին ստորաբաժանումների եւ զինուորների մասնակցութեան անժխտելի փաստեր կան, եւ որ ադրբեջանական կողմը օգտագործում է հետեւակազօրի մարտական մեքենաներ:

Ջորի Բալաեանը իր ելոյթում շնորհակալութիւն յայտնեց ՌՄՂԿի գործիչներին, ընդգծելով, որ Ղարաբաղում կատարուող իրադարձութիւնների լուսաբանումը այդ կոմիտէի գործունեութեան շնորհիւ զգալիօրէն փոխուել է:

Լ. Գոզմանը ռուսաստանեան մտաւորականների ուշադրութիւնը հրաւիրեց այն փաստի վրայ, որ 1988 թ. Փետրուարին սկսուած ղարաբաղեան շարժումը Խորհրդային Միութիւնում առաջին ժողովրդավարական շարժումն էր դա չպէտք է մոռանայ այսօր յաղթանակած ռուս ժողովուրդը: Նա նկատեց, որ արդի միջազգային իրաւունքը զգալի շրջադարձ է կատարել դեպի մարդու իրաւունքների առաջնայնութիւնը պետական ինքնիշխանութեան նկատմամբ, եւ, հետեւաբար, ընդլայնւում են միջազգային ընկերակցութեան հնարաւորութիւնները՝ սեփական քաղաքացիների տարրական իրաւունքները խախտող երկրի ներքին գործերին միջամտելու հարցում:

Ռուսաստանեան Հանրապետութեանը աւելի ձեռնտու է ունենալ ժողովրդավար հարեւաններ, քան կարմիր, կանաչ կամ այլ դրոշակների տակ քողարկուած ելուզակային պետութիւններ իր ելոյթի վերջում ասաց Լ. Գոզմանը:

Բանաստեղծ Ա. Շուեդովը կոչ արեց պայքարել, որպեսզի Խորհրդային բանակը ամբողջութամբ դուրս բերուի՝ սկզբում Գորիս-Ստեփանակերտ ճանապարհից, իսկ յետոյ ամբողջ Արցախի տարածքից: Նա հարկ համարեց ստեղծուող հայկական զօրամասերի կազմում ներգրաւել զօրացրուած ռուս զինծառայողների:

«Շարժում բռնութեան դէմ» զինծառայողների ծնողների մոսկուեան կոմիտէի անդամ Ե. Լունինան պատմեց վերջերս Հաթերքում տեղի ունեցած դէպքերի մասին, որոնց ականատեսն էր նա՝ ՌՍՖՍՀի պատգամաւոր Վ. Ամիրնովի հետ միասին:

Ա. Մելիք Շահնազարովը անհրաժեշտ եւ ժամանակին համարեց միջազգային դիտողներ ուղարկել Ղարաբաղ, զարմանք յայտնելով, որ Հայաստանի ԱԳՆն այդ ուղղութեամբ մինչ այժմ ոչ մի քայլ չի կատարել: Նա կասկածանք արտայայտեց, որ մօտակայ ամիսներին հնարաւոր կը լինի ՄԱԿի զօրքերը մտցնել ԼՂՀ:

Ա. Նույկինը իր ելոյթում մատնանշեց մի քանի ռազմավարական ուղղութիւնների, որոնք բացուեցին Արցախի առջեւ՝ Ադրբեջանի կողմից անկախութիւն հռչակելուց յետոյ եւ դրոյթային կերպով թուեց ՌՄՂԿի մարտավարական խնդիրները առաջիկայ շրջանում:

Նիստում ելոյթ ունեցան նաեւ Մոսխորհրդի պատգամաւոր Ա. Մելնիկովը եւ Ստեփանակերտի քաղխորհրդի նախագահ Մ. Միրզոյեանը: